# ԱՐԾԻՒ
# ARDZIV

Հ.Յ.Դ.Գ.Ե.Մ.-ի Պաշտօնաթերթ - Official Organ of the ARFYOC - Organe Officiel de la FRAOJC
Յունուար-Փետրուար 1997 - January-February 1997 - Janvier-Fevrier 1997


Հ.Յ.Դ.Գ.Ե.Մ.

## ԴԷՊԻ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ
## ARDZIV IN WONDERLAND
## ARDZIV AU PAYS DES MERVIELLES



**FEATURING:**

**-INTERVIEW WITH PROF CHAKÉ DER MELKONIAN-MINASSIAN**

**-COMPARITIVE CHART OF ARMENIAN, GREEK, ROMAN MYTHOLOGY**

**-PROFILE ON HOVANNES AIVAZOVSKI**

# ARDZIV

**Editor-in-Chief**
Garine Hovsepian

**Administrator**
Arminée Yaghejian

**Board of Editors**
Tina Soulahian
Sonia Chatoyan
Sonia Parseghian
Sarine Der Kaloustian
Verkine Khatchadourian
Nairi Basmadjian
Shant Jamgotchian

**Ontario Correspondent**
Shant Ghazarian

**Director of Marketing**
Minas Kelechian



**Office**
3401 Olivar Asselin,
Montréal, Québec
H4J 1L5 Canada
Tél.: (514) 331-6548
Fax: (514) 332-4870



**Publisher**
ARDZIV Armenian Youth of Canada



All rights reserved. Contents may not be reproduced in whole or in part without written permission of the publisher



Annual Subscription Rates: $15 for members and non members, Single copy $3, United States $15US, Overseas $20US.
GST is included in all domestic subscriptions.
Printed in Canada. Copies mailed in bulk.



Ձեր ծանուցումը Գանատայի
ամէնատարածուն
երիտասարդական «ԱՐԾԻՒ»
պաշտօնաթերթին մէջ
անկասկած պիտի նպաստէ
ձեր հաստատութեան
կարգայման

**Place an ad in ARDZIV *today*, so that your company may soar *tomorrow*!**

**Contact**
**Minas Kelechian at (514) 333-6278**


«ԱՐԾԻՒ»-ի մէջ գտած յօդուածները կ'արտայայտեն կանոնք ստորագրողներուն կարծիքները միայն։
The views expressed in ARDZIV reflect solely the views of the authors themselves

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

# TABLE OF CONTENTS


## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
## EDITORIAL

Դիցաբանական Աշխարհը........................................ 2

A journey to the land of mythology......................... 2

Un voyage au pays de la mythologie........................ 3

## ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ
## MYTHOLOGY

Յունական Դիցաբանութիւն...................................... 4

Սոնիա Բարսեղեան

Mythology 101........................................................ 5

N.

Comparitive Chart.................................................. 6

Հայկական Դիցաբանութիւն.................................... 8

Ոսկեմայր............................................................... 10

Ն.

Dionysus: The God of Ecstacy................................ 11

Sonia Chatoyan

Հանդիպում՝ Փրոֆէսոր Ճաքէ Մինասեանին Հետ...... 12

Սարին Տէր Գալուստեան

եւ Վերգին Խաչատուրեան

## ՏԵՍԱԿԷՏ

Երիտասարդութիւն................................................ 14

Շանթ Ժամկոչեան

## NEWS FLASH

News Flash............................................................. 15

## ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Բարեկենդան.......................................................... 18

## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Տեառնընդառաջ...................................................... 19

## ՓԱՌԱՏՕՆ

Ազգային եւ Յեղափոխական Երգերու Փառատօն..... 20

Գարոլին Չէրչեան

## ՄԱՍՆԱՃԻՒՂԷ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Մասնաճիւղէ Մասնաճիւղ........................................ 21

## Հ.Յ.Դ.Գ.Պ.Մ.

Վարիչներու Դաստիարակչական սեմինար................ 22

Ընկեր մը

## STAGE 'N SCREEN

Suburbia................................................................ 23

Tina Soulahian

Another Dylan........................................................ 23

N.

## CULTURAL

Hovannes Aivazovsky............................................. 24

Tina Soulahian

## CRITIC'S CORNER

Critic's Corner........................................................ 25

Hovig Kalanjian

## TOP TEN

Top 10 misconceptions when you're 9 in Armenian school........................................................ 26

## POEM

Վահագնի ծնունդը.................................................. 27

The Birth Vahakn................................................... 27

## HOROSCOPE

The Horoscope....................................................... 28

Psychic Sonia

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

# Դիցաբանական Աշխարհը

Առասպելը, աւանդավէպն ու դիւցազներգութիւնը վաղուց ստեղծուած եւ գոյատեւ իրականութիւններ են մարդուն կեանքին մէջ: Անոնց ծնունդը կը համապատասխանէ մարդկութեան պատմութեան ծնունդին հետ, զուգահեռակի ընթացող բարեշրջութեամբ, եւ սակայն, առաւել շեշտուած յայտնութեամբ մը՝ որոշ ազգերու մօտ: Այս երեքը կանականող յատկանիշները ընդհանրապէս պղտոր են մեր մտքերուն մէջ: Հետեւաբար, ահաւասիկ փորձ մը որ կը ձգտի ճշդել անոնց ծնունդը եւ սահմանել անոնց տարողութիւնն ու արժէքները:

Առասպելները, իրենց ծնունդէն ի վեր ծառայած են մարդուն, անոր հայթայթելով բացատրութիւններ՝ բնական եւ այլ բնոյթի երեւոյթներու շուրջ, զոր մարդը չէ կրցած հասկնալ: Այլ խօսքով՝ առասպելին կարեւորագոյն պաշտօնը եղած է մարդուն կգացնել ապահով եւ նուազ անկարող՝ անծանօթին նկատմամբ: Այսպէս՝ մարմնաւորուած ու խորհրդանշնական էակներ, եկեղեցական արարողութիւններ եւ պատարագներ կը ներկայացնէին մարդկութեանց տեսլանացած կայութիւն մը, տալով այս վերջինին այն խաբէական երեւոյթը՝ որ ան կրնայ նպաստաւոր կերպով ազդեցութիւն բանեցնել ամէնօրեայ դէպքերուն ընթացքին վրայ:

...ահաւասիկ փորձ մը որ կը ձգտի ճշդել անոնց ծնունդը եւ սահմանել անոնց տարողութիւնն ու արժէքները:

Այս իրականութիւնները ապագայ սերունդներուն փոխանցելու եւ աւանդելու մղումով՝ գրաւոր խօսքը շուտով փոխարինեց բերանացի եւ անգիր ճառերը: Այսուհետեւ՝ առասպելական պատմուածքները կուրկ էին կանոնք փոխանցողներու բերած փոփոխութիւններէ եւ ընդհանրապէս ամէն տեսակի ազդեցութիւններէ: Առասպելներու բովանդակութիւնը կայունացաւ, դարձաւ անմահ, օժտուեցաւ դիւցազնական բնոյթով, ծնունդ տալով ուստի՝ առաջին առասպելներուն եւ դիւցազներգութիւններուն: Այս վերջինները, առաւել շեշտելով տարբեր ազգերը կանականող գիծերը, դարձան կարեւոր մէկ բաղադրիչ մը՝ ժողովուրդի մը մշակութային ժառանգութեան:

Այսօր, յառաջացած արուեստաբանութեան որպէս հետեւանք՝ առասպելին ու դիւցազներգութեան վայելած կարեւորութիւնը մեր կեանքին մէջ նուազած է: Նուազած՝ սակայն ո՛չ անհետացած: Մարդուն հետաքրքրութիւնը անծանօթին նկատմամբ այսօր կ'արտայայտուի տարբեր ոճերով, օրինակի համար՝ «science fiction»-ով:

Եթէ կ'ուզէք քիչ մը կուարճանալ եւ ինչու չէ՝ նաեւ երազել, եկէ՛ք, միացէ՛ք Անահիտին, Սասունցի Դաւիթին, Ձիւբիթըրին եւ ուրիշներու, դէպի իրենց բնակավայրը՝ առասպելական աշխարհը . . . :

---

## EDITORIAL

# A JOURNEY TO THE LAND OF MYTHOLOGY

As far as humanity's collective memory can trace, myths, legends, and epics have always existed. Their birth and evolution is linked to that of the history of humanity and that of some nations in particular.

Many of us have a muddled understanding of the meaning of myths, legends, and epics, as well as of the characteristics that distinguish them from one another. From the age of time, myths have accomplished the role of offering explanations of natural and human phenomenon that human beings could not comprehend. When their reason was unable to pierce through the mystery and the unknown, humans would resort to their imagination. Hence, the primary purpose of myths was to secure humans, to make them feel less powerless against the unknown. Thus, religious rituals and sacrifices in relation to these myths would give humans the illusion of control and hope for a form of power over their destiny, a form of positive influence on the course of events to come.

Many of us have a muddled understanding of the meaning of myths, legends, and epics, as well as of the characteristics that distinguish them from one another.

Furthermore, in order to transmit these realities and to purport them from generation to generation, written form soon replaced oral speech. That is when the first epics were born.

However, with the diversification of nations, each cultural community created its own mythic world where myths and further developed legends came to explain the nation's past and its historical and social evolution. While myths nourished man's thirst for knowledge, epics fulfilled its need for heroism

⇨ 3

# EDITORIAL

## Un voyage au pays de la mythologie

Aussi loin que remonte la mémoire collective de l'humanité, les mythes, les légendes et les épopées ont toujours existé. Leur naissance et leur évolution sont associées à l'Histoire de l'homme en général, et à celle de certains peuples en particulier.

Cependant, beaucoup d'entre nous n'ont qu'une connaissance confuse et incomplète de leur origine et de leur signification.

Depuis la nuit des temps, les mythes ont servi d'explication aux phénomènes naturels et humains que l'homme ne comprenait pas. Lorsque la raison de l'homme était incapable de saisir les événements auxquels il était confrontés, l'imagination prenait le relais. La fonction première du mythe était donc de sécuriser l'homme, de lui permettre de se sentir moins impuissant face à l'inconnu. Ainsi les pratiques religieuses et les sacrifices en relation avec les mythes lui donnaient l'illusion de pouvoir influencer favorablement le cours des événements et par conséquent de mieux contrôler sa vie.

Il existe pourtant des caractéristiques propres à chacune de ces formes d'expression. Les mythes comblent le besoin de comprendre de l'homme, alors que les épopées relatent les aventures d'un héros courageux qui représente toujours une image exaltée de l'homme selon l'idéal d'une époque.

...beaucoup d'entre nous n'ont qu'une connaissance confuse et incomplète de leur origine et de leur signification.

De plus, avec la diversification des peuples, chaque communauté culturelle s'est créé un espace mythique plus spécialisé, destiné à expliquer le passé et l'évolution historique et sociale de sa nation.

Or, pour transmettre ces récits et les perpétuer de génération en génération, le discours écrit est bientôt venu remplacer le discours oral. Par conséquent, le texte écrit est devenu un élément important du patrimoine culturel d'une nation.

Aujourd'hui, avec l'industrialisation et la technologie avancée, pourrait-on penser que les mythes et les épopées appartiennent à un passé révolu? La science n'est-elle pas capable de répondre à toutes les interrogations?

D'un autre côté, alors que l'intérêt de l'homme par rapport au mystère et l'inconnu demeure inchangé, on peut dire que les mythes et les légendes n'ont pas disparu mais ont plutôt évolué vers une dimension universelle et plus cosmique en abordant le domaine de science-fiction.

Dans ce numéro, nous vous invitons à un voyage au pays de la mythologie et de l'épopée, un voyage dans le temps et dans l'espace, où vous recontrerez des personnages célèbres tels que Jupiter, Anahid, David de Sassoun.

Nous espérons vous divertir, vous faire rêver, et vous aider à mieux comprendre ces composantes fondamentales de toutes les cultures du Globe.

---

2⇦

and marvel. Written form thus became an important part of a nation's cultural patrimony.

Currently, it seems that myths and legends take up less place in modern society. Science, technology, and advanced means of communication reduce the degree of mystery found in the events confronted by humans. Is that to say that human beings today are not creating their own, newer form of myths and legends? Can science fiction be considered as a way for humans to express or explain both their fascination and fear of the future and the unknown extra-terrestrial world?

In this issue, we would like to invite you on a journey to the land of mythology, legends, and epics. A journey through time and space where you will encounter famous characters such as Jupiter, Dionysos, Anahid, and David of Sassoun. We hope to entertain you, to make you dream, and to help you further understand the fundamental components of cultures of the Globe...


CASINO NIGHT
IN MONTREAL

Կազմակերպութեամբ՝

Շաբաթ, 14 Յունիս, 1997

(514) 331-5561

$20.00

# ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ

# ՅՈՒՆԱԿԱՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Յունական դիցաբանութիւն կը կոչենք բոլոր այն պատմուածքներն ու առասպելները, որոնց բանագիրներն ու յուշարձանները ցոյց կու տան որ անոնք տեղի ունեցած են յունական աշխարհի մէջ, Ք.Ա. Թ. եւ Ը. դարերու միջեւ:

Այս դիցավէպերը ստեղծագործութիւններն են յոյն մեծ բանաստեղծներու: «Իլիատ»-ը յունական առաջին գրուած վավերաթուղթն է, ուր կը գտնենք ամենէ վաղեմի յունական գրականութիւնը: Յունաստանի ծնունդով, մարդ արարածը ինքզինք դրաւ տիեզերքի կեդրոնը եւ առաջին անգամ ունեցաւ այդ ինքնագիտակցութիւնը: Յոյներուն համար, տիեզերքն էր չաստուածները ստեղծողը, եւ ո՛չ հակառակը: Չաստուածներէն առաջ կը գտնէինք երկինքն ու երկիրը (Ուրանոսն ու GAEA), որոնք առաջին ծնողները գոյացան. անոնցմէ ծնան տիտանները, իսկ չաստուածները՝ անոնց թոռներն էին:

Տիտաններէն ամենէ կարեւորն էր Գրոնոս(Լատիներնով՝ Սատիւրնը), որ իշխեց բոլոր միւս տիտաններուն, մինչեւ որ իր տղաքը՝ Զեւսը(Ճիւբիթըր), հօրը գահընկեց ըրաւ ու իշխանութեան տիրացաւ: Իսկ Գրոնոս՝ փախաւ դէպի Իտալիա:



12 Մեծ Ողիմպիականները

12 մեծ Ողիմպիականները կ'իշխէին չաստուածները, որոնք յաջորդեցին Տիտաններուն: Կ'ապրէին Ողիմպոս լերան վրայ, որուն մասին մեծ բանաստեղծ Հոմէրը կ'ըսէ որ հոն ոչ կը ձիւնէ, ոչ կ'անձրեւէ եւ ոչ մեծ հով կը խանգարէ այդ տեղի խաղաղութիւնը: 12 մեծ Ողիմպիականները կը կազմէին աստուածային ընտանիք մը.

1) Զեւս(Ճիւբիթըր), իրենց պետը որուն կը յաջորդէ իր երկու եղբայրները: 2) Փոսէյտոն (Նեբթիւն) 3) Հատէս (Փլիւտոն) 4) Հէստիա (Վէսթօ) 5) Հէրա (Ճինոն), Զեւսի կինը 6) Արէս (Մարս), իրենց որդին: Զեւսի զաւակները՝ 7)Աթէնա (Մինըվ) 8) Ափոլոն 9) Աֆրոդիթ (Վէնիւս) 10) Հէրմէս (Մէրքիւր) 11) Արդէմիս (Տիան) եւ վերջապէս՝ 12) Հէֆայիստոս (Վոլքէյն), Հէրայի որդին:

## Զեւս

Զեւս եւ իր եղբայրները կը տիրէին տիեզերքը ու անոր բաժանումը տարածուած էր թուահանութեամբ: Կը պատկերացուի իբրեւ տարբեր չաստուածներ միաւորող պետը Ողիմպիականներուն ու այդ պատճառով եղած է ամենէ մեծաւորն ու փառաւորը:

Զեւս ունեցած է բազմաթիւ սիրային կապեր, որոնք խորամանկութեամբ կրցած է պահել իր կնոջմէն՝ Հէրայէն:
Արծիւը եղած է իր նախընտրած թռչունը, իսկ ընկուզենին՝ իր սիրած ծառը, որուն տերեւներու շշիւնով իր կամքը կ'արտայայտէր:

## Հէրա (Ճունոն)

Հէրա, միաժամանակ Զեւսի կինն էր ու անոր քոյրը: Ան ամուսնութեան խնամակալն էր ու մեծ խնամքով կը նայէր ամուսնացած կիները: Սակայն, անոր վայրոյթը անբաղդատելի էր ու երբե՛ք չէր մոռնար նախատինք մը: Հէրա պատճառ եղած էր Տրոյի պատերազմին, որովհետեւ Տրոյի մը համարձակութիւնը ունեցած էր ուրիշ չաստուածուհիի մը գեղեցկութիւնը աւելի գնահատելի գտնելու: Կովն ու սիրամարգը իրեն նուիրուած էին ու Արկոսը իր նախընտրած քաղաքն էր:

## Փոսէյտոն (Նէբթիւն)

Փոսէյտոն կ'իշխէր ծովը ու Զեւսի եղբայրն էր, որուն միայն ինք կը յաջորդէր կարեւորութեամբ: Յոյներու համար, ծովը ըլլալով մեծ կարեւորութիւն մը, Զեւսի փոխանորդին տուած էին անոր խնամքը:
Փոսէյտոն միշտ կը պատկերացուի երաժան մը իր ձեռքին, նետ մը երեք ծայրով, որով կրնար վերցնել ու տարածել ամէն ինչ: Կը հետաքրքրուէր ոչ միայն ձիերով, այլեւ՝ ցուլերով:

## Հատէս (Փլիւտոն)

Զեւսի երրորդ եղբայրը՝ Հատէս, խնամակալն էր ընդերկրին ու

⇨ 5

# MYTHOLOGY 101

Mythology began when primitive man desired to explain a universe he did not understand. He created stories about everything that puzzled him, such as the appearance and disappearance of the stars, the moon, and the sun. Therefore, mythology represents man's first attempt at science, at finding-out who made the universe, and at establishing a relation to "The Maker", God.

As man's knowledge and understanding grew, man's ideas of God developed and changed. The idea of one god did not always exist: our ancestors believed in many gods. They believed that a spirit, which they named and worshipped, induced each natural phenomenon.

For men who lived in very ancient times, everything had a life of its own: not only the forces of nature, but stones, trees, and even man made objects, because such things help humans. In fairy tales, chairs and tables talk. These stories derive from religious beliefs from the time when man thought everything was given the same five senses that he had, and that everything had the same power to feel.

Primitive man felt animals were more powerful than he was and could therefore protect him from all that he feared. As a result of these beliefs, images worshipped by man in primitive times were often shaped as animals: the Egyptian gods had bodies of men but the heads of lions or cats, and the Aztecs of Mexico worshipped monsters in the shape of feathered serpents.

When men banded together to build towns, cities, and nations, they established laws for the welfare of everyone. They also brought their beliefs together and created a religion. They gave each god a name and described the extent of their powers. From the worship of these gods derived standards of wrong and right, so that codes of honour and behaviour developed.

The mythologies of the world tell the tales of the ways of nature, the history of the earth, the way in which life was sustained. It is fascinating how the mythologies of people in separate sections of the earth are strikingly similar.

Greek mythology existed as a religion 500 years before Christ. In fact, a great part of our language, our ideas of beauty, and some of the most beautiful poetic stories of our literature derive from Greek mythology.

Greek mythology resembles other mythologies in that the forces of nature were given personalities and were worshipped; however, there is no worship of animals. Their gods were portrayed as being like men and women, only more heroic in stature and more perfect in beauty. The Greeks also gave their gods some human characteristics. The gods were jealous and envious; they were not all loving, nor all kind. Only Zeus, the greatest of all gods, was deemed as being "The Just".

Roman mythology is borrowed from the Greeks. When Rome conquered Greece, the Romans took-in the Greek gods. They changed the names of most of them and combined them with gods of their own. The Romans renamed the twelve Olympians, but two of them, Pluto and Apollo kept their names.

N.

Source: Compton's Encyclopaedia

---

4⇦

մեռելներու աշխարհին: Սակայն, մահուան չաստուածը չէր: Զայն կը կոչէին նաեւ Փլիթոն, որ չաստուածն էր գետնի փակ բոլոր հարստութիւններուն ու թանկագին քարերուն: Անոր կինն էր Գորէ, կոր Հադէս գետնէն մէջ բերաւ ու կայն ըրաւ դժոխքի թագուհին:

## Աթէնա (Մինըվ)

Աթէնա Զէւսի աղջիկն էր, սակայն ոչ մէկ մայրէ ծնած էր: Քաղաքի չաստուածուհին էր, կեանքի, արուեստի եւ երկրագործութեան խնամակալն էր: Աթէնա երեք կոյս չաստուածուհիներէն կարեւորագոյնն էր: Զինք կը կոչէին Փարթէնոսս կոյսը, ու իր տաճարն էր Փարթէնոնը: Կը պատկերացնէր իմաստութիւն, ողորմութիւն ու կզաստութիւն (chastetė): Աթէնքը իր քաղաքն էր, ձիթենին՝ իր ծառը ու բուն՝ իր կենդանին:

## Աբոլոն (Աբոլոն)

Զէւսի եւ Լէթոյի զաւակը, ծնած է Տէլոս կղզիին վրայ: Իրապէս, չաստուածներու ամենէ «յոյնը» ինք կ'ընթանայ: Լոյսի ու ճշմարտութեան չաստուածն էր, որուն շրթներէն երբե՛ք կեղծիք մը չէր ելլէր: Երաժիշտն էր որ կը հմայէր Ողիմպոսը:

## Արփէմիս (Տիան)

Արփէմիս Աբոլոնի երկւորեակ քոյրն էր, ծնած Զէւսէն եւ Լէթոյէն, եւ Ողիմպոսի երեք կոյս չաստուածուհիներէն մէկը կը հանդիսանար: Ան վայրենի կենդանիններու չաստուածուհին էր, ու չաստուածներու որսապետն էր: Նաեւ՝ երիտասարդութեան խնամակալն էր:

## Աֆրոփիթ (Վէնիւս)

Սիրոյ եւ գեղեցկութեան չաստուածուհին՝ կը հրապուրէր (séduire) եւ կը խաբէր բոլորին, ըլլայ մարդ թէ չաստուած: Ինթուքի չաստուածուհին՝ կը ծաղրէր բոլոր անոնց, որոնք իր խորամանկութեամբ սիրաշահած էր: Իրապէս անդիմադրելի չաստուածուհի մըն էր, որ իմաստուններուն հոգին իսկ կը գրաւէր. այդ պատճառով ոսկեայ չաստուածուհին էր:

Հռոմեյայիները զինքը նոյն կերպով կը ներկայացնէին: Գեղեցկութիւնը իրեն կ'ընկերանար: Հովերն ու ամպերը Աֆրոփիթէն կը խուսափէին, հողը՝ իր քայլերուն փակ ծաղիկներու գորգի մը կը վերածուէր, իսկ ալիքները՝ կը սկսկին ծիծաղիլ: Չաստուածուհիին ամէն մէկ շարժումը կ'արտադրէ հրաշալի լոյս եւ առանց իրեն՝ ոչ կայ խինթ եւ ոչ կայ հրապուրանք: Աֆրոփիթ

⇨ *10*

# MYTHOLGY

## COMPARITIVE CHART

| ROMAN GOD | GREEK EQUIVALENT | DESCRIPTION |
|---|---|---|
| Jovis, Jupiter | Zeus | Supreme organizer of the universe<br>God of the sky and the atmospheric phenomena<br>Sovereign and father: protector of social order and human groups of the home and the personal possessions<br>God of justice, savior, and protector of hosts<br>God of the Oracles |
| Neptune | Poseidon | God of the raging seas, protector of sailors and fisherman<br>shaker of ground, author of earth tremors and of spring waters<br>Husband of the earth, master of mysterious depths<br>God of fertility<br>Tamer of horses |
| Pluto | Hades | God of the underworld<br>Monarch and warden of the dead<br>Master of the underground rides of the earth |
| Juno | Hera | Wife of Jupiter<br>Protector of legitimate and of all women marriages<br>Assists births or presides births<br>Fertility<br>Protector of palaces, high and sacred places, and of cities |
| Diana | Artemis | Protector of nature, the wilderness, and of animals and their offspring<br>Goddess of hunting<br>Protector of trees, goddess of flora, of spring, and of waters<br>Protector of women's lies, prepares women for marriage, watches over births, and raising of children |
| Venus | Aphrodite | Fertility: Union and procreation, fertility of the earth raises children<br>Love: Desire and emotions<br>Waters: Spawn from the sea, she insures safe navigation |
| Hestia | Astial | Eternal virginity<br>Incarnation of fire<br>Guardian of the perpetual fires |
| Minerva | Athena | Guardian of the fortified palace, of the home, children, adolescents, anf of health<br>Protector of housework, textiles, ceramic, and |

# MYTHOLGY

# COMPARITIVE CHART

| ROMAN GOD | GREEK EQUIVALENT | DESCRIPTION |
|---|---|---|
| | | goldsmith's trade<br>Protector of hereos and cities in times of war |
| Mars | Ares | God of war, carnage, and gory battle<br>Incarnation of brutal force |
| Vulcan | Hephaistos | God of crafts<br>Master of volcanoes and fire<br>Divine blacksmith, master of fire arts |
| Mercury | Hermes | God of stones, of travelers, merchants, and of the marketplace<br>Guide of souls<br>Protector of limits, of property, of the threshold of the flock<br>God of communication<br>Messenger of Zeus:Protector of servants<br>God of eloquence and of rational discourse<br>Protector of the stadium and gymnasium |
| Ceres | Demeter | Fertility of the sown earth<br>Initiator of humans to the mysteries of fertiliza-tion, of the continuation of life, and of the after-life after-world |
| Bacchus | Dionysos | God of flora, cultivation of the vineyards and of wine<br>God of fertility of the earth<br>God of animal fertility<br>God of inspiration, theater, poetry, festivities<br>God of ecstasy, mystic delirium, enthusiasm, union to the divinty, and of freedom |
| Apollo | Apollo | Archer who spread brutal death and plague<br>Protector and healer<br>Purifier: halt vengeance, introduces morality and measure<br>Legislator and protector of men<br>Poet and Oracle<br>Master of animals,destroyer of harmful animals<br>God of the sun |

# Հայկական Դիցաբանութիւն

| Չաստուածներ | Նկարագրութիւն |
|---|---|
| Արամազդ | Հայկական դիցարանի գերագոյն աստուածը, աստուածներու արարիչը<br>Կը համարուէր ժամանակի որդին, երկնքի ու երկրի աստուածը |
| Անահիտ | Պտղաբերութեան, արգասաւորութեան, ծննդաբերութեան եւ վաղ շրջանին նաեւ ռազմի աստուածուհի<br>Մ.թ.ա. (մեր թուականէն առաջ) 1 դարուն, հայկական պետութեան գլխաւոր աստուածուհին էր<br>Կոչուած էր նաեւ «սնուցող մայր», «ոսկեմայր», «ոսկեմատն», «ոսկեծղի» |
| Աստղիկ | Սիրոյ եւ գեղեցկութեան աստուածուհի |
| Արեգ | Արեւի պաշտամունքը մարմնաւորող աստուած յետագային, Արեգ դիտուած է իբրեւ արական մարդակերպ աստուած<br>Յետագային, նոյնացուած է նաեւ Տիրի եւ ապա՝ Միհրի հետ. ոմանք նոյնիսկ նոյնացուցած են զինք Վահագնի հետ |
| Գիսանէ | Հայկական հեթանոսական աստուած, որուն վերագրում է հնդկական ծագում<br>Անունը աւանդաբար բացատրուած է «գես» (ծամ, մազ) բառով՝ երբ ինքը եւ իր տաճարի սպասաւորները ունեցած են երկար մազեր |
| Ծովինար | Ջուրի ծովու, անձրեւի աստուածուհին հրեղէն, ցասումնալից էակ է, որ ամպրոպի ժամանակ կը խաղար ամպերուն մէջ եւ պատուհասող կարկուտ կամ պտղաբեր անձրեւ կ'ուղարկէր մարդկութեան |
| Հայկ | Հայ ժողովուրդի անուանադիր նախնին եւ ռազմի գերագոյն աստուածը անձնաւորած է Արարատ երկրի հզօրութեան, անկախութեան, հայկական լեռնաշխարհի ցեղերու համախմբման եւ հայ ժողովուրդի ինքնահաստատման գաղափարը<br>Դիտուած է որպէս Արարատեան տէրութեան տակ համախմբուած ցեղային իշխաններու «գերագոյն հայրը» |
| Միհր | Կենսատու լոյսի, մաքրութեան, բարութեան, ճշմարտութեան եւ աւելի ուշ՝ արեգակի աստուածը յետագային համարուած է ապատարար մարտիկ կամ փրկիչ (մեսիա), որը երկրորդ գալստեամբ աշխարհին ազատելու էր չար ոգիններէն ու մահէն, ստեղծելով երկրային երանելի թագաւորութիւն |
| Նանէ | Իմաստութեան եւ ողջախոհութեան դիցուհի |

# Հայկական Դիցաբանութիւն

| *Չաստուածներ* | *Նկարագրութիւն* |
| --- | --- |
| Վահագն | Պատերազմի, քաջութեան եւ յաղթանակի գերագոյն աստուածը<br>Ոմանք կինք նկատած են որպէս արեգակնային աստուած<br>Ըստ առասպելներու, կենսատու լոյս անձնաւորող<br>Վահագնը, որպէս քաջ որսորդ կը մարտնչէր խաւարը, չար ու վնասակար ուժերը մարմնաւորող վիշապներուն դէմ։ Այս պատճառով, կինք անուանած են «Վիշապաքաղ»<br>Իբրեւ ռազմի աստուած՝ Վահագնը նոյնացուած է այդ գաղափարը խորհրդանշող Մարս մոլորակին հետ |
| Վանատուր | Հիւրընկալութեան աստուած<br>Համարուած է պանդուխտներու, օտար ճամբորդներուն<br>հովանաւորը, անոնց ապաստան, օթեւան տուողը |
| Տիր | Դպրութեան, պերճախօսութեան, գիտութիւններու եւ արուեստներու աստուածը<br>Համարուած է Արամազդ աստուածահօր ատենադպիրն ու սուհանդակը, մարդկանց ճակատագրի գուշակն ու երազներու մեկնիչը, անոնց չար ու բարի գործերու գրանցողը, ննջեցեալներու հոգիները «անդրշիրիմեան աշխարհ» ուղեկցողը |

| Հայկական | Յունական | Հռոմէական |
| --- | --- | --- |
| Արամազդ | Zeus | Jupiter |
| Անահիտ | Artemis | Diana |
| Աստղիկ | Aphrodite | Venus |
| Արեգ | Helios | – |
| Ծովինար | Ledo | Rhea |
| Միհր | Hephaistos | Vulcan |
| Նանէ | Athena | Minerva |
| Վահգն | Apollo | Apollo |
| Տիր | Apollo | Hermes / Mercury |

# Ոսկեմայր



Հայ դիւցավներգութեան ամենէ գլխաւոր չաստուածուհիներէն մին՝ Անահիտ գեղեցկուհին կոչուած էր նաեւ «Մնուցող Մայր», «Ոսկեմայր» ու «Ոսկեծիր» եւ կը համարուէր պտղաբերութեան, ծննդաբերութեան եւ հին շրջաններու, ինչպէս նաեւ ռազմի աստուածուհին։ Անոր անուամբ կոչուած էր հայկական հեթանոսական տոմարի, ամսուան 19-րդ օրը։

Անահիտին պաշտամունքը մինչեւ Փոքր Ասիա, Յունաստան եւ նոյնիսկ Հռոմ տարածուեցաւ. այս պատճառով, ան կը սեպուէր հայ պետութեան գլխաւոր թագուհին։

Քրիստոսէ առաջ Ա. դարուն, հայ դիւցավներգական աւանդութիւններուն համաձայն, Անահիտ, որ կը համապատասխանէ յունական Արտեմիսին ու հռոմէական Տիանային, Արամազդի դուստրն էր։

Անահիտի կերպարանքով մեհեաններ կը գտնուէին Արտաշատի, Բագարանի, Աշտիշատի եւ այլ վայրերու մէջ, սակայն անոր գլխաւոր մեհեանը կը գտնուէր Բարձր Հայքի Եկեղեաց գաւառը, ուր չաստուածուհիին պաշտամունքը այնքան բուռն էր որ ամբողջ գաւառը անուանած էին Անահիտական։

Մեր թուականէն առաջ 34-րդ թիւին, Հռոմէացի յինուորներ՝ զօրավար Մարկոս Անտոնիոսի հովանաւորութեան տակ, կողոպտեցին Երզնկայի Անահիտի աշխարհահռչակ տաճարը՝ քայքայելով աստուածուհիին ոսկեձոյլ արձանը եւ որպէս աւար բաժնելով իրենց միջեւ։

Նաւասարդի սկիզբը (Օգոստոս 15), հայերը կը նշէին Անահիտի տօնը, որ կապուած էր բերքահաւաքի հետ։ Չաստուածուհիին կը մատուցանէին առաջին բերքը, անոր ոսկիէ, արծաթէ, պղինձէ կառուցուած արձանները կարդարելով պտղաբեր ծառերու դալար ճիւղերով շինուած պսակներով։

Տօնախմբութիւններուն ընթացքին, բազմաթիւ ուխտաւորներ կը հաւաքուէին Անահտական մեհեաններուն շուրջ, օրեր տեւող աղօթքներ, երգեր եւ խնճոյքներ կատարելով։
Անահիտի կը նուիրուէին ցուլեր, որոնք չաստուածուհիին իբրեւ զոհ մատուցանելով՝ կը մորթէին, անոնց արիւնը կը ցայէին ժողովուրդին վրայ (իբր մկրտութիւն) եւ կը խմէին։ Այս ծէսը կը կոչուէր տավրաբոլիա։

Քրիստոնէութեան ծագումէն ետք, Անահիտի պաշտամունքը փոխարինուեցաւ Սուրբ Մարիամ Աստուածածինի պաշտամունքով։ ԺԹ. դարու վերջաւորութեան, Երզնկայի շրջանը գտնուող Սատաղի մէջ, գտնուած է Անահիտ աստուածուհիին վերագրուող պղնձաձոյլ գլուխ մը, զոր պահուած է Բրիտանական թանգարանին մէջ։

Քաղեց՝ Ն.

5⇦
ճանչցուած է իբրեւ դաւաճան եւ չարահնար. մարդոց վրայ ունէր չարաղէտ կործանիչ ոյժ մը։

Աղաւնին իրեն տրամադրուած թռչունն էր, իսկ մրտենին՝ իր ծառը։

## Հերմէս (Մերքիւր)

Հերմէս ծնած էր Զեւսէն եւ Մայայէն։ Իր շարժումներով արթուն եւ շնորհաշուք էր։ Չաստուածներէն ամենէ ճարպիկն ու նենգաւորն էր, եւ այդ պատճառով՝ Հերմէս գողերու չաստուածն էր։ Ասոր կողքին, առեւտուրի չաստուածն էր եւ հոգիները կ'ուղղէր դէպի իրենց վերջնական հանգստավայրին։

## Արէս (Մարս)

Արէս, պատերազմի չաստուածը, աստուածորդին էր Զեւսին եւ Հերային։ Հոմէր, Արէսը կը նկարագրէ իբր մարդասպան եւ միաժամանակ շատ թոյլ անձնաւորութիւն մըն է որ կ'արտասուէ երբ կը տանջուի եւ կը փախչի՝ երբ վիրաւոր է։

Պատմուածքի մը մէջ, եղած է Աֆրոտիթի սիրահարը։ Իրեն տրամադրուած թռչունը անգղն է, իսկ կենդանին՝ շունը։

Քաղեց՝ Սոնիա Բարսեղեան

Աղբիւր՝ La Mythologie: ses dieux, ses héros, ses légendes.







# Dionysus: The God of Ecstacy

Of all the gods of Roman and Greek mythology, Dionysos(also called Bakkhos and Lakkhos) is certainly one of the most interesting. Many plays have been written about him and much literature has tried to analyse his "raison d'être". This article will try to at least touch the surface of the tumultuous existance of Dionysos by dissecting one of the many plays written about him. Euripedes' Bakkhai, deals with this complexe god, and tries to reveal certain elements pertaining to social status in Ancient Greek society through a fictitious(or partly fictitious) plot.

Son of Zeus and his secret mistress Semele(a mortal from Thebes), Dionysos was initially aborted by his mother. Zeus had felt pity for the fetus so he pressed it into his thigh until it was time for the baby to be born. So Dionysos was born from his father's body, with horns on his head and snakes writhing in his hair.

No one in Thebes believed the fact that Dionysos was part-man, part-god. Especially not Semele's sisters, until they(and all other women of Thebes)were said to have been driven mad by Zeus' illigitimate child.

Insane and crazed, the women left their homes and ran up to the mountains at night, to frenziedly worship their newly beloved god. Something that rendered the Theban men, and most of all king Pentheus, absolutely furious; hence the king sent out his thugs to capture Dionysos.

When he was brought in front of the king, Dionysos tried to seduce him. Snapping out of the trance, Pentheus had the prisoner's hair cut off and threw him in jail.

As god of vengeance, Dionysos first caused an earthquake that destroyed the prison holding him. As Lord of emotions, he drove the king mad and enticed him into becoming a transvestite, to spy on the women during their nightly escapades into the mountains.

However, this was all a machination, because as soon as the king was led out of the city, Dionysos set Pentheus up in a tree and summoned the pack of Mad Women to kill and dismember him. The mother of the king, Aguae, led the attack and then returned to the city with her son's head. Suddenly regaining her sanity, she reels in agony at what she has done, when Dionysos appears to her out of nowhere, furious, and bannishes her immediately.



Two important rites practiced nightly by the Theban women were the mountain dancing and the raw-flesh sacrifices. They represent, in a certain way, "the throbbing for release against the arbitrary restraints of conventional behavior and values." A sort of feminism born amidst the patriarchal model instilled in Ancient Greece and Rome at that period in time. Somehow, the "madness of Dionysos" enabled Theban women to come together and feel their solidarity and power, independant from the control of men. Even at the physical level, Dionysos is portrayed as being "effeminate" and "seductive", two terms pertaining to women.

The complexity of Dionysos is particularly interesting to study. The god possesses two faces: a benign one he shows to those who worship him and adhere to his rituals; in paradox, to those who reject him, he shows his face of destruction and death.

Women's status in Ancient Greece left much to be desired. They had no right of any kind, were kept in guarded seclusion within the innermost chambers of the house, and were absolutely forbidden education beyond the skills necessary for housekeeping. They had neither the right to decide whom to marry, nor the right to possess any property of their own. Basically, they were non-persons.

Ironically, concubines, ex-slaves, and prostitutes had complete freedom, were sexually and economically independent, and were often very well educated. The "madness of Dionysos", inflicted upon the women, was able to free them of the patriarchally imposed definitions of self, womanhood, and sanity.

Another element, transvestite practices, is certainly a matter for discussion. These practices were long associated with Dionysian religion in Antiquity and were mostly accepted in society as legitimate. In plays, for example, women's roles were always taken on by men.

"Dionysos born of Semele in more recent times was quite soft and delicate of body, by far excelling others in beauty

⇨ 19

# Հանդիպում՝ Փրոֆէսոր Շաքէ Մինասեանին Հետ

«Արծիւ»-ի Յունուար-Փետրուար թիւին նիւթն ըլլալով դիցաբանութիւնն ու առասպելները, խմբագրական կազմը յաւելեալ տեղեկութիւններ ունենալ ուզեց ունենալ հայ գրականութեան ամենէն նշանաւոր դիւցազներգութեան՝ «Սասունցի Դաւիթ»-ի մասին: Հետեւաբար, դիմեցինք փրոֆէսոր Շաքէ Մինասեանին:

*Հարցում-* Ի՞նչ է փարբերութիւնը դիցաբանութեան(mythologie), դիւցազներգութեան (épopée) կամ աւանդավէպին եւ առասպելին(légende) միջեւ:

Այս երեք բառերը, հասկացողութիւնները, յաճախ իրարու հեփ կը շփոթուին բայց կանականելու համար լաւագոյն միջոցը՝ բառերուն իմասփին դիմելն է: «Դիցաբանութիւն»՝ այսինքն ասփուածներու մասին պափմութիւններ. «դիւցազներգութիւն»՝ այսինքն դիւցազուններու կամ դիւցազնական արարքներու մասին երգեր եւ «աւանդավէպ» կամ «առասպել»՝ մեր հին աւանդութիւններուն շուրջ պափմութիւն:

Բոլորն ալ ժողովրդական ծագում ունին, ժողովուրդին կողմէ սփեղծուած են եւ ժողովրդական երեւակայութեան մեծ բաժին մը ունին իրենց մէջ: Իսկ աւելի մանրամասն կերպով իւրաքանչիւրին վրայ եթէ կեդրոնանանք, կը փեսնենք որ այս ընդհանուր յափկանիշներէն զափ դիցաբանութիւնը աւելի շափ կապ ունի բնութեան ուժերու կամ ասփուածներու վերաբերեալ ժողովուրդի հաւափալիքներու կամ գերբնական ուժերու հեփ. ուժեր՝ որոնք ժողովուրդը չէ կրցած բացափրել: Այս հանգամանքը ունեցող կացութիւններու շուրջ մարդիկ պափմութիւններ սփեղծած են: Մարդոց էութեան իմասփին վերաբերող պափկերացումներու վրայ կը հիմնուին այս բոլորը:

Դիւցազներգութիւնը «դիւցազուն» բառէն կու գայ եւ կը նշանակէ քաջութիւն. քաջութեան արարքի մը հերոսին վերաբերող պափմութիւնն է: Ընդհանրապէս, դիւցազներգութիւնը մեծ հերոսի պափմութիւնն է, իսկ դիցաբանութիւնը կը բաղկանայ անջափ-անջափ նիւթերէ եւ պափմութիւններէ:

*Հարցում-* Որո՞նք են դիւցազնավէպի մը յափկութիւնները: Կրնա՞նք նման յափկութիւններ գփնել «Սասունցի Դաւիթ»-ի դիւցազներգութեան մէջ:




Ազգային ժողովրդական դիւցազնավէպերը կամ Հերոսապափումները ընդհանուր առմամբ իրենց մէջ կը խփացնեն հեփեւեալ կէփերը. ազգի մը կամ ժողովուրդի մը կրօնական հաւափալիքները, ազգային առասպելները, ազգի մը բարոյական խորհրդանիշները, փեղական հերոսական արժէք ներկայացնող յիշափակելի դէպքերը, որոնք յեփոյ ամբողջ ազգին կը վերագրուին, ժողովուրդին կամ ազգին ընդհանրական երեւակայութենէն եւ հեթանոսական ու քրիսփոնէական հաւափալիքներուն միախառնումէն յառաջացած ազգային, կրօնական հաւափամքը: Ասոնք ամէն ազգի հոգեւոր եւ բարոյական արժէքներն են, որոնց վրայ հիմնուած է ազգին ինքնութիւնը՝ ընկերային, փնփեսական, պափմական ամբողջութեան մը ձեւին փակ: Մեր պարագային, ասիկա մասնաւորաբար ճիշդ է, որովհեփեւ նոյնիսկ մեր քրիսփոնէական վարուելակերպին կամ սովորութիւններուն մէջ մեծ թիւով մնացորդներ կան հեթանոսական շրջանի հաւափալիքներէն կամ արարողութիւններէն: Մեր դիւցազնավէպը կը ներկայացնէ ամբողջ ազգին հաւաքական փորձառութիւնը: Ասոր մէջ կը

# MYTHOLGY

մտնեն մեր ազգային յոյսերը եւ վախերը, բարոյական նկարագիրը, կրօնական հաւատալիքները, պատմութեան ընթացքին ունեցած փորձառութիւնները եւ անոնցմէ քաղած դասերը, չարի ու բարիի յաւիտենական պայքարին մասին մեր հասկացողութիւնը:

Ազգ մը այս ձեւի միայն մէկ դիւցազնավէպ կրնայ ունենալ: Երկրորդ մը՝ անոր կրկնութիւնը միայն կրնայ ըլլալ: Դիւցազնավէպը, ազգային ըլլալով հանդերձ, իր մէջ կը պարփակէ համամարդկային արժէքներ, որովհետեւ մարդոց զգացումները ամէն տեղ նոյնն են: Ճիշդ է որ ազգային դիւցազնավէպը իր իւրայատկութիւնները ունի, որոնք սահմանուած են ընկերային, տնտեսական, աշխարհագրական փուլերով եւ պատմական փորձառութիւններով: Ասոնք ամէն մէկ ազգի համար տարբեր կ'ըլլան: Բայց ինչ որ զգացումներուն կը վերաբերի, ամէնքին համար նոյնն է, համամարդկային է:

Եթէ «Սասմայ Ծռերը» բաղդատենք ուրիշ ազգային դիւցազնավէպերու հետ, կը տեսնենք թէ ամէն տեսակէտով տիպար դիւցազնավէպ մըն է, որովհետեւ իր մէջ կը խտացնէ քիչ առաջ յիշուած բոլոր յատկանիշները հայ ժողովուրդի ծնունդէն, Հայկ նահապետէն մինչեւ մեր օրերը, մեր ազգային նկարագիրը, ձգտումները, բարոյական հասկացողութիւնները: Հոն յիշուած ամէն մէկ դէպք անպայման տեղի ունեցած չէ. բայց անոր իմաստին համապատասխանող իրական դէպքեր կը գտնենք մեր պատմութեան մէջ: Այս է որ մեր դիւցազնավէպին կու տայ բացառիկ արժէք մը, որովհետեւ անոր մէջ կը գտնենք մեր էութեան, անցեալին, ներկային, ապագային, երազներուն, ձգտումներուն ամփոփումը՝ խորհրդանշանական ձեւի տակ: Այս է որ չափազանց կարեւոր կը դարձնէ Սասունցի Դաւիթը եւ «Սասմայ Ծռեր»-ու ամբողջ դիւցազնավէպը մեր ժողովուրդին համար:

*Հարցում*- Ի՞նչ է «Սասունցի Դաւիթ»-ի ծագումը: Ներշնչուա՞ծ է իրական դէպքէրէ:

Նախ կ'ուզեմ ճշդել որ դիւցազնավէպին անունը «Սասմայ Ծռեր» է, այսինքն Սասունի Ծուռեր: Ան չորս մասերէ կը բաղկանայ . . . 1) Սանասար եւ Բաղդասար, 2) Առիւծ Միեր, 3) Սասունցի Դաւիթ, 4) Փոքր Միեր: Ուրեմն, ան կ'ընդգրկէ նաեւ Սասունցի Դաւիթի մեծ հօր, հօր եւ զաւակին պատմութիւնները:

Բայց որովհետեւ դիւցազնավէպին բուն կորիզը իր երրորդ մասն է, սովորութիւն դարձած է ամբողջութիւնը կոչել «Սասունցի Դաւիթ»:

Իսկ երրորդ մասին պատմական մեկնակէտը հետեւեալն է: Իններորդ դարուն, Հայաստանի մէջ արաբական տիրապետութեան օրով, Եուսուֆ ոստիկանը՝ Մշոյ դաշտին մէջ բանակ դրած՝ գարնան կը սպասէր, որպէսզի Սասունի վրայ յարձակի: Բայց Սասունցիները՝ Յովնան Խութեցիի առաջնորդութեամբ՝ իրե՛նք կը յարձակին արաբական բանակին վրայ, որ անակնկալի եկած կը պարտուի: Եուսուֆը կը փախչի եւ եկեղեցիի մը մէջ կը պահուըտի: Ժողովուրդը վինք դուրս կը հանէ եւ տեղնուտեղը կը սպաննէ:

Այս դէպքը բերնէ բերան պատմուելով, հետզհետէ «կը ճոխանայ» երբ իւրաքանչիւր պատմող նոր մանրամասնութիւն մը կ'աւելցնէ իր լաւծին վրայ: Այսպէս՝ դարերու ընթացքին՝ սկզբնական պատմութեան վրայ կը բարդուին արաբական տիրապետութեան դէմ Հայերու կազմակերպած ուրի՛շ պայքարներու ալ մանրամասնութիւններէն ոմանք: Ի վերջոյ, դիւցազներգութեան մէջ այս ամէնը կը վերածուի Սասունցի Դաւիթի եւ Մսրայ Մելիքի մենամարտին: Իսկ ամբողջ երրորդ մասը հետզհետէ կը ձեւաւորուի որպէս խորհրդանշանական պատկերացումը հայ ժողովուրդի ազատատենչութեան՝ վինք խորհրդանշող հերոսին՝ Սասունցի Դաւիթին կերպարանքին տակ:

Դիւցազնավէպին առաջին, երրորդ եւ չորրորդ բաժինները եւս կը պարունակեն բազմաթիւ դրուագներ, որոնք կը յիշեցնեն ազատատենչութեան վերաբերող մեր առասպելները եւ պատմական դէպքերը:

*Հարցում*- Այս դարուն, նոր դիւցազներգութիւններ կրնա՞ն ծնունդ առնել:

Գրականութեան պատմութեան հասկացողութեամբ՝ ազգային դիւցազնավէպ մը կրնայ կազմաւորուիլ երբ զայն ստեղծող ժողովուրդը տակաւին մանուկ է, գիր-գրականութիւն չունի, ուրեմն երբ դիւցազնավէպը բերանացի կը շարահիւսուի եւ ընդլայնուելով կը փոխանցուի յաջորդ սերունդներուն: Երբ ժողովուրդ մը աւելի յառաջդիմած է, պատմական դէպքերու արձանագրութիւնը կը պահէ որպէս պատմութիւն, իսկ իր գրողները կը հեղինակեն վէպ, արձակ կամ ոտանաւոր հերոսապատում, եւայլն, բայց ոչ՝ դասական իմաստով ազգային դիւցազնավէպ (épopée nationale):

Մեր դարուն՝ ուրիշ բովանդակութեամբ դիւցազնավէպեր կրնան ի հարկէ ծնունդ առնել մարդկութեան երեւակայութեան զարկ տուող նիւթերու շուրջ, ինչպէս օրինակ՝ անջրպետի հետախուզումը: Բայց այլեւս շատ ուշ է «Սասմայ Ծռեր»-ու նման ազգային դիւցազնավէպեր ստեղծելու համար:

Հարցազրոյցը վարեցին՝
Սարին Տէր Գալուստեան
եւ Վերժին Խաչատուրեան

# Երիտասարդութիւն

Ոչ հեռու անցեալին էր, երբ միութենական պարտականութեամբ երէց ազգայինի մը հետ կը հանդիպէի. բնականաբար, պզտիկ զրոյցի մը բռնուիլը անխուսափելի էր:

Եւ ահա մեր յարգելի ազգակիցը խանդավառուած առաջարկեց, իր կզայարանգներուն ճնշումին տակ, կ'ըսէր. «Ահա այսպէ՛ս պէտք է ըլլայ երիտասարդ ըսածդ. տղաս դո՛ւք էք ուժը եւ դո՛ւք էք որ մեր ազգին գործերը պիտի յաջողցնէք, եւայլն . . . » :

Վերոյիշեալ խօսքը նորութիւն մը չէր ինծի համար, եւ աւելի՛ն՝ մեր անցեալի թէ ներկայի մտաւորականներն ալ պիտի թելադրէին նոյնը, ինչպէս պիտի ըսէր Միքայէլ Վարանդեան. «Երիտասարդութիւն՝ յոյսի եւ հաւատքի բոլոր ազնիւ կիրքերու խանդավառ մարմնացումը»:

Մարդկութեան փորձառութեան հանրագիտարանը, մեզ կը թելադրէ՝ թէ կարելի է մեր մտային բոլո՛ր թռիչքներուն իրագործումը կատարելագործել թուղթի վրայ, սակայն հարցը կը կայանայ անոր կենդանացումին, կեանքի կոչելուն մէջ: Եթէ մենք, երիտասարդներս, գիտնայինք այն ինչ որ մեր երէցները գիտեն եւ չեն կրցած իրագործել, ո՞վ գիտէ ինչե՛ր-ինչե՛ր պիտի իրագործէինք: Բայցեւայնպէս, հարցը ան չէ թէ երիտասարդութիւնը գիտէ՞ կամ չի գիտեր, կը նախաձեռնէ՞ կամ ոչ. բուն հարցը այն է, որ նախ՝ երիտասարդութիւն գոյութիւն ունի՞, իսկ յետոյ՝ եթէ գոյութիւն ունի ինչո՞ւ է որ երիտասարդները շատ գործեր չեն նախաձեռներ:

Նախ եւ առաջ, գործունեայ երիտասարդներու փոքր խումբ մը մնացած է միայն մեր հայկական միջավայրէն ներս:

Սակայն ինչո՞ւ նուազած է երիտասարդութեան թիւը: Կարեւոր հարցում մըն է այս, որ շատեր պիտի խուսափին հարցնելէ, որովհետեւ պատասխաններու եւ պատճառներու իրականութեան հետ դէմ հանդիման գալէն կը վախնան: Իսկ ինչո՞ւ կը վախնան . . . այդ ալ շատ պարզ ու յստակ է. այդ պատճառներուն մէջ, իրենց մեծ բաժին մը կ'ինայ:

Երկրորդական պատճառներու կարգին, կարելի է նշել անձնական անհամաձայնութիւնները, կամ յետամնացութիւն համարել Հայ կեդրոններէն ներս գործելը, եւայլն: Սակայն, իմ կարծիքով, գլխաւոր պատճառները հետեւեալներն են՝

-տեղական դաստիարակչական ծրագիրները, որոնք անհատին անուղղակիօրէն անհատապաշտութիւն եւ անձնասիրութիւն կ'ուսուցանեն, որմէ ետք խնդրոյ առարկայ անհատը, նախ իր անձնականին մասին պիտի մտածէ, իր ուսման, իր ապագային՝ այսինքն գործին, եւ ասոնցմէ ետք միայն հաւաքական գործի մասին.

-տիրող տնտեսական անկումները, որոնք ինքնաբերաբար զարկ կու տան վերոյիշեալներու զարգացման.

-անհատի մը ինքնութեան բազմաթիւ ազգային բաղադրիչներու խճողումը. օրինակի համար՝ «ծնած եմ Սուրիա, այսինքն՝ Սուրիացի եմ որոշ չափով, զաւակն եմ Այնթէպցի հօր եւ Ուրֆացի մօր մը, այսօր Գանատացի եմ, եւ անշուշտ, ասոնց կողքին, մոռցայ յիշելու որ վերջին հաշուով հա՛յ եմ»: Այս՝ կարեւոր այն կէտերէն մէկն է, որու մասին նոր սերունդը չուզեր լսել, այլ ասոնց մէջէն միայն՝ «հայ եմ»-ը կարեւոր է իրեն համար եւ վե՛րջ:

-Ցաւալին՝ ի՞նչ ըսենք եկեղեցիներու երեք-չորսութեան մասին, երբ նոյնինքն հոգեկան կամ բարոյական արժէքներու անճանաչելիութիւն մը գոյութիւն ունի անհատին մօտ, շնորհիւ՝ մեր «զարգացումին»:

Թուարկութեան շարքը կ'երկարի, բայց հարցումս կը մնայ նոյնը. «Ինչո՞ւ երիտասարդները ակումբ չեն գար»: Արդեօ՞ք պատահեցաւ որ գաղութէս ներս կլոր սեղանի մը շուրջ հաւաքուին միութիւններ այս հարցին լուծում մը գտնելու համար: Չէ՛. սխալեցայ, ներողութիւն. միութիւն մը ի՛ր անդամներով արծարծեց այս առաջնահերթութիւն ունեցող հարցը: Արդար ըլլալու համար ըսեմ որ անցնող երեք տարիներու ընթացքին, երկու անգամ խորհրդաժողովներ գումարուեցան այս հարցին շուրջ: Սակայն, անցեալի յաջողութիւններուն նման, ասոնք ալ դարձան մտային մարզանքի բացառիկ վայր մը, որմէ ետք մինչեւ օրս մնացած յիշատակներն ալ պատմութեան կը պատկանին այլեւս: Հոս տեղին է մատնանշել, թէ այս ժողովներուն խօսողները խորքին մէջ կը նմանին այն յայտնի հրամանատարին, որ իր զինուորներուն կը հրահանգէ դիրքերէն չնահանջել, իսկ ինք կաղ ըլլալու պատրուակով արդարացուցիչ կը համարէ ճակատէն նահանջելը. իսկ այս փախուստը՝ վախկոտ, տկար մարդու հոգեբանական յատկութիւն մըն է:

Իրօք, երիտասարդութեան վիճակը՝ այստեղ թէ այլուր, ահազանգային է, իսկ այս վիճակով, ո՛չ մեր գաղութները պիտի զարգանան, ո՛չ ալ մեր այսօրուան ունեցածը պիտի կարենանք պահել:

Ի վերջոյ, ամէն հայ անհատ իրեն ինկած բաժին պատասխանատուութեան գիտակցելով, իր մասնակցութիւնը պէտք է բերէ երիտասարդութիւնը փրկելու այս կարեւոր գործին, իսկ եթէ այսօր չընենք այդ, վաղը արդէն ուշ պիտի ըլլայ: «Այնքան գործեցինք որ խօսելու ժամանակ չ'ունեցանք»(Ռոստոմ):

Շանթ Ժամկոչեան

INTERNATIONAL YORK JEWELLERY
1344 Ste-Catherine O.
Montréal
Tél.: (514) 874-0824

APRIL 1, 1997

## Revisionist Lowry Leaves Post

WATERTOWN, Mass.—The Armenian National Committee of the Eastern United States learned that long-time Armenian Genocide revisionist Prof. Heath Lowry has stepped down as the Chairman of the Near Eastern Studies at Princeton University, however still maintaining his post as Ataturk Professor of Ottoman and Near Eastern Studies.

Since his appointment three years ago, scores of leading American academics and Genocide scholars have consistently protested Lowry's as an "academic mercenary" for the Turkish government.

The Armenian American community, led by the ANC, forcefully protested his appointment, confronting Lowry at speaking engagements, organizing a series of letter-writing campaigns, and regularly calling upon Princeton University to end its association with Lowry.

Prior to his appointment at Princeton, Lowry was Executive Director of the Institute for Turkish Studies, a Washington-based lobbying operation funded by the Turkish government.

The controversy regarding his academic integrity heated up in Spring of 1995 with the publication of an article in the Journal of Genocide and Holocaust Studies which revealed that, while at ITS, he had actively conspired with the Turkish Embassy in Washington to discredit scholarship on the Genocide.

APRIL 2, 1997

## Turkish Court Rules in Favor of Dadrian's Book

ISTANBUL—The Eighth Penal Section of Turkey's Supreme Court has upheld, by a three to two majority decision, the findings of the No. 5 State Security Court of Istanbul, acquitting the publisher of Professor Vahakn Dadrian's genocide volume of charges it violated clause 2 of Article 312 of Turkey's Penal Code, which prohibits "the fomenting among the peoples of Turkey feelings of rancor and enmity based on differences of class, religion, creed and race."

As a result of the high court's findings, Dadrian's work, which was a legal analysis of the World War I Armenian Genocide which appeared as a monograph in the Vol. 14, No. 2 Summer 1989 issue of Yale Journal of International Law, will no longer be prohibited from distribution and sale in Turkey.

After deliberating on the case for the past 10 months, the panel of judges, by a majority decision, upheld the lower courts' original acquittal verdict, explaining that "the book bears the title of Genocide as a Problem of National and International Law and is centered around the theme that the Armenians of the Ottoman Empire were subjected to a genocide that was both premeditated and centrally planned."

APRIL 3,1997

## ARF Youth Takes Part in Socialist Youth International

ATHENS—A delegation of the Armenian Revolutionary Federation Youth Organization attended the annual conference of the Mediterranean region of the Socialist Youth International, which took place in Athens last week.

